



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ
 ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
 ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

« 14 » ...*Տարեթի*... 2017 թվականի № ...*35*.....Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 02/24.3/21956-16 հանձնարարականը և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի փետրվարի 13-ի թիվ 02/24.14/2753-17 գրությունը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2017 թվականի մարտի 1-ի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Արգավանդ տեղամասի մնացորդային պաշարների գնահատման, դրանց հետագա օգտագործան հնարավորությունների կամ պետական հաշվեկշռից դուրս գրման և այդ տարածքների նպատակային նշանակության փոփոխման հարցի վերաբերյալ առաջարկությունների ներկայացման նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

Հակոբ Պետրոսյան

Աշխատակազմի ընդերքի պետական տեսչության
 Երկրաբանական և մարկշեյդերական վերահսկողության

Գևորգ Թորոսյան

բաժնի գլխավոր մասնագետ (աշխատանքային խմբի
ղեկավար)

Աշոտ Բարսեղյան

Աշխատակազմի ընդերքի գործակալության
երկրաբանության, նորմատիվամեթոդական և
վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ

Լիլիա Ալավերդյան

Աշխատակազմի ընդերքի գործակալության
ընդերքաբանական փորձաքննության և պաշարների
հաստատման բաժնի գլխավոր մասնագետ
«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական
ոչ առևտրային կազմակերպության հաշվառման և
տեղեկատվության բաժնի պետ

2. Աշխատանքային խմբին՝

մինչև 2017 թվականի մարտի 30-ը սահմանված կարգով իրականացնել ուսումնասիրություններ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հոկտեմբերյանի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Արգավանդ տեղամասի հանքավայրի մնացորդային պաշարների հաշվարկման ուղղությամբ և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի հաստատմանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:



ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ